Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԻՆԴԵՔՍ

Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված՝ «Էներգիայի արդյունավետ վերափոխման խթանում» զեկույցի (2018-2019թթ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ 1
2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 2
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ 5
4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ 8

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Էներգետիկ համակարգը ժամանակակից տնտեսության առանցքային տարրերից է: Էներգիայի ապահով և հուսալի մատակարարումը անհրաժեշտ է այնպիսի արդյունաբերական գործընթացների և հանրային ծառայությունների համար, ինչպիսիք են ջեռուցումը, լուսավորությունը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը և այլն: Էներգետիկ ոլորտի ներկայիս մարտահրավերների հաղթահարման համար անհրաժեշտ է ռեսուրսների ավելի լայն զինանոց, քան այն, ինչը կարող է տրամադրվել առանձին երկրների կամ դրանց ներսում գործող ընկերությունների կողմից: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է համաշխարհային համագործակցային հարթակ, որը պայմաններ կստեղծի խնդիրների լուծման և հնարավորությունների գնահատման համար: Համաշխարհային տնտեսական համաժողովը (ՀՏՀ) կազմել է վերլուծական զեկույց՝ երկրների էներգետիկ համակարգերի զարգացմանը և դրանց առաջ ի հայտ եկած խնդիրների լուծմանը նպաստելու նպատակով: Զեկույցում նկարագրվում են նաև էներգիայի արդյունավետ վերափոխման հրամայականները:

Վերոհիշյալ զեկույցը սկսել է հրապարակվել 2013 թվականից՝ «Համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքս» անվանումով: Այն հնարավորություն էր տալիս համեմատելու տարբեր երկրների էներգետիկ համակարգերի բնութագրերը, ինչպես նաև զարգացման միտումներն ու արդյունավետությունը: Արդեն 2018 թվականից այս ինդեքսը կրեց մի շարք փոփոխություններ, ինչի արդյունքում այն վերանվանվեց էներգիայի վերափոխման ինդեքս (Energy Transition Index)[1]: Այս ցուցանիշը ցույց է տալիս տվյալ երկրի էներգետիկ համակարգի գործունեության արդյունավետությունը և էներգիայի վերափոխման պատրաստականությունը: Այն երկրներին առաջարկում է մշակել էներգիայի վերափոխման երկարաժամկետ ուղղություններ՝ հաշվի առնելով էներգետիկ համակարգի կատարողականը և կարևորելով անհրաժեշտ այն գործոնները, որոնք կարող են բարձրացնել երկրների պատրաստականությունը էներգետիկ վերափոխումներին:

Էներգիայի վերափոխման ինդեքսը 2018թ. հաշվարկվել է 114 երկրների համար, իսկ 2019-ին՝ ինդեքսի հրապարակման արդեն երկրորդ տարում, 115 երկրների համար: Էներգիայի վերափոխման ինդեքսով արդեն 2-րդ տարին

[1] Էներգիայի վերափոխման ինդեքսը մաս է կազմում ՀՏՀ-ի «Էներգիայի արդյունավետ վերափոխման խթանում» նախաձեռնության:

անընդմեջ (2018 և 2019թթ.) Շվեդիան զբաղեցնում է առաջին հորիզոնականը: 2018-ին, ըստ վարկանիշային աղյուսակի, հետնապահը Զիմբաբվեն է, իսկ 2019-ին՝ Հայիթին: ՀՀ-ն ըստ 2018թ. տվյալների՝ զբաղեցրել է 54-րդ հորիզոնականը՝ 55.3 միավորով, իսկ 2019-ին՝ 57.2 միավորով 50-րդ հորիզոնականում է: ՀՀ-ն տարածաշրջանի հարևան երկրներից 2018-ին զիջում է Ադրբեջանին և Վրաստանին: Արդեն 2019-ին Հայաստանի դիրքի բարելավման և Ադրբեջանի դիրքի վատթարացման հետ կապված՝ ՀՀ-ն հարևան երկրների շարքում զբաղեցնում է 2-րդ տեղը՝ հետ մնալով միայն Վրաստանից: Թե՛ 2018-ին, թե՛ 2019-ին Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) երկրների շարքում ՀՀ-ն առաջատար է էներգիայի վերափոխման ինդեքսով:

Ինչ վերաբերում է զեկույցի կառուցվածքին, ապա այն կարելի է պայմանականորեն բաժանել երկու մասերի, որոնք բնութագրում են համապատասխանաբար «*Համակարգի արդյունավետության*» և «*Վերափոխման պատրաստականության ենթաինդեքսների*» նկարագրությունը:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշվել է, 2018-ին համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության (ՀԷԵԱ) ինդեքսը արդեն վերանվանվեց էներգիայի վերափոխման (ԷՎ) ինդեքս: 2018-ից սկսեց կիրառվել ինդեքսի հաշվարկման նոր մեթոդաբանությունը: Այստեղ հարկ է նշել, որ էներգիայի վերափոխման ինդեքսը ունի բաղադրյալ, քառաստիճան կառուցվածք: Այն կազմված է ենթաինդեքսներից, որոնք իրենց հերթին կազմված են ինդիկատորներից, իսկ վերջիններս՝ ցուցանիշներից: Դիտարկվող յուրաքանչյուր ցուցանիշի համար հաշվարկվում են գնահատականներ՝ 0-100 միջակայքում: Նախկին էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքսը հաշվարկվում էր երեք («Տնտեսական աճ և զարգացում», «Շրջակա միջավայրի կայունություն», «Էներգիայի հասանելիություն և անվտանգություն») ենթաինդեքսների միջինացված ցուցանիշների հիման վրա, իսկ գնահատումը իրականացվում էր 0-1 միջակայքում:

ԷՎ ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած են «**Համակարգի արդյունավետության**» և **«Վերափոխման պատրաստականության»** ենթաինդեքսները: Այս ենթաինդեքսները իրենց մեջ պարունակում են համապատասխանաբար երեք և վեց ինդիկատորներ, որոնց ագրեգացման արդյունքում ստացվում են նշված երկու ենթաինդեքսները, իսկ արդեն վերջիններիս

միջինացման արդյունքում ստացվում է էներգիայի վերափոխման ինդեքսը: Հակիրճ նկարագրենք ենթաինդեքսներից յուրաքանչյուրը[2]:

Գծապատկեր 1. Էներգիայի վերափոխման ենթաինդեքսները և դրանց ինդիկատորները



[2] Fostering Effective Energy Transition 2018, World Economic Forum, 14.03.2018, https://www.weforum.org/reports/fostering-effective-energy-transition (այցելվել է 23.01.2020թ.), Fostering Effective Energy Transition 2019, World Economic Forum, 25.03.2019, https://www.weforum.org/reports/fostering-effective-energy-transition-2019 (այցելվել է 23.01.2020թ.):

1. **Համակարգի արդյունավետության ենթաինդեքս:** Այս ենթաինդեքսի միջոցով հաշվարկվում են երկրների էներգետիկ համակարգերի ընթացիկ կատարողականները: Դրանք հաշվարկվում են երեք ինդիկատորների հիման վրա, որոնք միասին կազմում են «էներգետիկ համակարգի եռանկյունին»: Այդ երեք ինդիկատորներն են՝ «Տնտեսական աճ և զարգացում», «Շրջակա միջավայրի կայունություն», «Էներգիայի հասանելիություն և անվտանգություն»: Իրենց հերթին, նշված երեք ինդիկատորները հաշվարկվում են համապատասխանաբար 7, 4 և 6 ցուցանիշների ագրեգացման արդյունքում: Հարկ է նշել, որ օպտիմալ էներգետիկ համակարգի կառուցումը պահանջում է տվյալ երկրին հարմարեցված հատուկ մոտեցում: Խնդիրն այն է, որ էներգետիկ համակարգի բարելավմանն ուղղված գործողությունները տարբեր երկրների համար ունեն իրենց առանձնահատկությունները՝ կախված սոցիալ-տնտեսական առաջնահերթություններից, բնական ռեսուրսներով օժտվածության մակարդակից, էներգիայի կախվածությունից, ներմուծումից և արտահանումից, ինչպես նաև գործարար միջավայրից: Էներգիայի հուսալի և անվտանգ մատակարարումը արդյունավետ էներգետիկ համակարգի կարևորագույն բաղադրիչն է, ինչի համար անհրաժեշտ պայմաններն են՝ ճկուն ենթակառուցվածքները, ճշգրիտ և արագ արձագանքը աշխարհաքաղաքական, տեխնոլոգիական և ֆինանսական ռիսկերին: Քանի որ տնտեսական զարգացումը կապված է էներգետիկ համակարգի արդյունավետության հետ, երկրները պետք է ձգտեն էներգետիկ հասանելիության և անվտանգության՝ ապահովելով էներգետիկ ծառայությունների մատչելիությունը քաղաքացիների և արդյունաբերության ոլորտի համար: Այս ամենը նախադրյալներ կստեղծի նաև արդյունաբերության մրցունակության բարձրացման համար:
2. **Վերափոխման պատրաստականության ենթաինդեքս:** Այս ենթաինդեքսը գնահատում է երկրների պատրաստականությունը էներգետիկ համակարգերի ապագա վերափոխումներին: Ենթաինդեքսի հաշվարկման հիմքում ընկած են թվով վեց ինդիկատորներ՝ «Կարգավորումներ և քաղաքական հանձնառություններ» (5), «Հաստատություններ և կառավարում» (3), «Կապիտալ և ներդրումներ» (4), «Ենթակառուցվածքներ և նորարար բիզնես միջավայր» (4), «Մարդկային կապիտալ և սպառողի մասնակցություն» (2) և «Էներգետիկ համակարգի կառուցվածք» (5)[3], որոնք նպաստում են համակարգի արդյունավետության ենթաինդեքսի առաջընթացին: Վերափոխման պատրաստականության ենթաինդեքսը

[3] Փակագծում ներկայացված թվերը այն ցուցանիշների քանակն են, որոնց հիման վրա հաշվարկվում է տվյալ ինդիկատորը:

վերաբերում է երկրի էներգետիկ համակարգը կարգավորող քաղաքական, տնտեսական և սոցիալական կառույցներին, որպեսզի թույլ տա ժամանակի ընթացքում անցում կատարել ավելի անվտանգ, հուսալի, ներառական և կայուն էներգետիկ համակարգին, որը նպաստում է ավելի արագ տնտեսական զարգացմանը: Այս բաղադրիչների ուսումնասիրությունը, ինչպես նաև դրանց բարելավման ներուժի բացահայտումը անհրաժեշտ են էներգիայի արդյունավետ վերափոխումն ապահովելու համար: Վերափոխման պատրաստականության ենթաինդեքսի բաղադրիչները երկրներին հնարավորություն են տալիս հասկանալու էներգետիկ վերափոխում կատարելու, ինչպես նաև կայուն և ուժեղ միջավայր ստեղծելու առաջնահերթությունները:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

2018-ին էներգիայի վերափոխման ինդեքսը ՀՀ-ի համար կազմել է 55.3 միավոր, ինչի արդյունքում 114 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 54-րդ հորիզոնականը: 2019-ին ՀՀ էներգիայի վերափոխման ինդեքսը բարելավվել է նախորդ տարվա համեմատ՝ կազմելով 57.2 միավոր: 2018-ի համեմատ ՀՀ-ն բարելավել է նաև իր հորիզոնականը՝ 2019-ին զբաղեցնելով 50-րդ հորիզոնականը:

Գծապատկեր 2. ՀՀ էներգիայի վերափոխման ինդեքսի արժեքը (աջ առանցք) և հորիզոնականը 2018 և 2019թթ. համար



2019-ին 2018-ի համեմատ ՀՀ-ն ԷՎ ինդեքսի դիրքը բարելավել է 4 հորիզոնականով: Սա պայմանավորված է մնացած դիտարկվող երկրների

ցուցանիշների վատթարացմամբ, յուրաքանչյուր տարի դիտարկվող երկրների շրջանակի ընդլայնմամբ, ինչպես նաև ՀՀ էներգիայի վերափոխման ինդեքսի 1.9 միավորի աճով:

2019-ին նախորդ տարվա համեմատ ՀՀ էներգիայի վերափոխման ինդեքսի 1.9 միավորով աճին նպաստել են ԷՎ ինդեքսի երկու ենթաինդեքսների զգալի աճը: Նշված երկու ենթաինդեքսներից առավել մեծ աճ է գրանցել համակարգի արդյունավետության ենթաինդեքսը՝ 2.2 միավորով: Այս ենթաինդեքսի աճին ամենամեծ նպաստումն է ունեցել «Էներգիայի հասանելիություն և անվտանգություն» ինդիկատորի աճը, որը կազմել է 11.5 միավոր: Ենթաինդեքսի դրական աճին խթանել է նաև «Շրջակա միջավայրի կայունություն» ինդիկատորի աճը, որը կազմել է 0.6 միավոր: Չնայած այն հանգամանքին, որ **ներկայիս էներգետիկ վերափոխման ինդեքսի և նախկին էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքսի ցուցանիշները համադրելի չեն թվային առումով, այստեղ հատկանշական է մի կարևոր փաստ. 2014-2017թթ. ընկած ժամանակահատվածի բոլոր տարիներին «Տնտեսական աճ և զարգացում» ինդիկատորը միայն աճել է: Իսկ արդեն 2019-ին «Տնտեսական աճ և զարգացում» ինդիկատորը նախորդ տարվա համեմատ նվազել է 5.4 միավորով: Միավորների այսչափ նվազման պատճառով ՀՀ-ն այս ինդիկատորով զիջել է իր դիրքերը 24 հորիզոնականով:** Համակարգի արդյունավետության ենթաինդեքսի երեք ինդիկատորների հիման վրա, ինչպես արդեն նշեցինք, նախկինում կազմվում էր համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքսը:

Աղյուսակ 1. ՀՀ էներգիայի վերափոխման ինդեքսի ցուցանիշները 2018 և 2019թթ. համար

Ցուցանիշ/հորիզոնական-միավոր	Հորիզոնական 2018թ.-ին	Հորիզոնական 2019թ.-ին	Միավորը 2018-ին	Միավորը 2019-ին
Էներգիայի վերափոխման ինդեքս	**54**	**50**	**55.3**	**57.2**
Համակարգի արդյունավետության ենթաինդեքս	**52**	**47**	**63.0**	**65.2**
Տնտեսական աճ և զարգացում	26	50	69.5	64.1
Շրջակա միջավայրի կայունություն	60	60	50.8	51.4
Էներգետիկ հասանելիություն և անվտանգություն	78	53	68.7	80.2
Վերափոխման պատրաստականության ենթաինդեքս	**62**	**59**	**47.7**	**49.2**
Կարգավորումներ և քաղաքական հանձնառություններ	67	57	49.2	55
Հաստատություններ և կառավարում	70	72	46.7	45.3
Կապիտալ և ներդրումներ	48	47	51.8	50.3
Ենթակառուցվածքներ և նորարար բիզնես միջավայր	86	67	39.5	44.8
Մարդկային կապիտալ և սպառողի մասնակցություն	86	91	25.5	25.9
Էներգետիկ համակարգի կառուցվածք	37	36	73.5	73.6

Էներգիայի վերափոխման ինդեքսի դրական աճին իր նպաստն է ունեցել նաև վերափոխման պատրաստականության ենթաինդեքսի աճը, որը կազմել է 1.5 միավոր: Ենթաինդեքսի աճին մեծապես նպաստել են «Կարգավորումներ և քաղաքական հանձնառություններ», ինչպես նաև «Ենթակառուցվածքներ և նորարար բիզնես միջավայր» ինդիկատորների աճը՝ համապատասխանաբար 5.8 և 5.3 միավորներով: Իսկ արդեն այս ենթաինդեքսի «Հաստատություններ և կառավարում» և «Կապիտալ և ներդրումներ» ինդիկատորները 2019-ին 2018-ի համեմատ նվազել են համապատասխանաբար 1.4 և 1.5 միավորներով:

2019-ին ՀՀ-ն ամենաբարձր դիրքը՝ 36-րդ հորիզոնական, և ամենաբարձր ցուցանիշը՝ 73.6 միավոր, գրանցել է «Էներգետիկ համակարգի կառուցվածք» ինդիկատորով: Իսկ ամենացածր դիրքը՝ 91-րդ հորիզոնական, և ամենացածր ցուցանիշը՝ 25.9 միավոր, գրանցվել է «Մարդկային կապիտալ և սպառողների մասնակցություն» ինդիկատորով: 2018-ին ՀՀ-ն ամենաբարձր դիրքը զբաղեցրել է «Տնտեսական աճ և զարգացում» ինդիկատորով՝ 26-րդ հորիզոնական (2019-ին այս

ինդիկատորը զիջել է իր դիրքերը 24 հորիզոնականով), իսկ ամենացածր դիրքը՝ «Մարդկային կապիտալ և սպառողների մասնակցություն» և «Ենթակառուցվածքներ և նորարար բիզնես միջավայր» ինդիկատորներով՝ նույն 86-րդ հորիզոնականը: Ամենաբարձր ցուցանիշը գրանցել է «Էներգետիկ համակարգի կառուցվածք» ինդիկատորը՝ 73.5 միավոր, իսկ ամենացածր ցուցանիշը՝ «Մարդկային կապիտալ և սպառողների մասնակցություն»՝ 25.5 միավոր:

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ

2018 թվականին էներգիայի վերափոխման ինդեքսի ցուցանիշով ամենաբարձր հորիզոնականը 114 երկրների շարքում զբաղեցնում է Շվեդիան՝ 75.8 միավորով: Համակարգի արդյունավետության ենթաինդեքսով երկիրը զբաղեցնում է 2-րդ հորիզոնականը՝ 80.7 միավորով, իսկ վերափոխման պատրաստականության ենթաինդեքսով Շվեդիան զբաղեցնում է 3-րդ հորիզոնականը՝ 70.8 միավորով: Էներգիայի վերափոխման ինդեքսով վատագույն ցուցանիշը գրանցել է Զիմբաբվեն՝ 36.8 միավորով: Երկիրը համակարգի արդյունավետության ենթաինդեքսով զբաղեցնում է նախավերջին՝ 113-րդ տեղը, 38.2 միավորով, իսկ արդեն վերափոխման պատրաստականության ենթաինդեքսով զվաղեցնում է 109-րդ տեղը, 35.4 միավորով:

2019-ին էներգիայի վերափոխման ինդեքսով արդեն 115 երկրների շարքում ամենաբարձր արդյունքը, ինչպես և նախորդ տարի, գրանցել է Շվեդիան՝ 74.9 միավորով: 2019-ին էներգիայի վերափոխման ինդեքսի վատագույն ցուցանիշը ունի Հայիթին՝ 36.0 միավորով: Համակարգի արդյունավետության ենթաինդեքսի ցուցանիշով Հայիթին զբաղեցնում է վերջին հորիզոնականը՝ 35.1 միավորով, իսկ վերափոխման պատրաստականության ենթաինդեքսով երկիրը զբաղեցնում է 108-րդ հորիզոնականը՝ 36.9 միավորով:

Աղյուսակ 2. ԷՎ ինդեքսը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում (2019թ.)

Երկիր	Հորիզոնական				Ինդեքս	
	Տարածաշրջանային		Համաշխարհային			
	2018	2019	2018	2019	2018	2019
Լիտվա	2	1	27	19	61.1	64.5
Էստոնիա	1	2	26	20	61.3	64.2
Լատվիա	3	3	29	23	60.5	63.7
Սլովենիա	4	4	33	24	59.5	63.6
Վրաստան	9	5	45	32	56.9	61.1
Սլովակիա	6	6	42	33	57.8	61.0
Ալբանիա	5	7	40	38	58.4	59.5
Ռումինիա	7	8	43	40	57.5	59.3
Հունգարիա	13	9	55	41	55.3	59.2
Խորվաթիա	11	10	52	42	55.7	59.2
Չեխիա	10	11	51	49	56.0	57.3
Հայաստան	12	12	54	50	55.3	57.2
Մոնտենեգրո	19	13	89	55	46.7	55.5
Ադրբեջան	8	14	44	57	57.2	55.4
Մոլդովա	15	15	68	69	51.0	52.4
Լեհաստան	14	16	67	75	51.2	51.4
Բուլղարիա	20	17	92	77	46.0	51.0
Ռուսաստան	16	18	70	79	50.9	50.3
Ղազախստան	17	19	75	83	49.7	49.5
Տաջիկստան	18	20	82	88	47.9	48.5
Սերբիա	21	21	100	99	43.7	45.7
Բոսնիա և Հերցեգովինա	22	22	109	104	40.6	42.7
Ուկրաինա	23	23	104	107	41.4	41.5
Ղրղզստան	24	24	112	110	39.3	40.0

Աղյուսակ 2-ում Հայաստանը համեմատվում է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մյուս երկրների հետ: Ինչպես տեսնում ենք, երկրների այս խմբում ՀՀ-ն թե՛ 2018-ին, թե՛ 2019-ին գտնվում է վարկանիշային աղյուսակի միջին դիրքերում: 2018-ին տարածաշրջանի առաջատարը Էստոնիան է, որը համաշխարհային վարկանիշային սանդղակում 26-րդն է՝ 61.3 միավորով: 2019-ին առաջատարը արդեն Լիտվան է, որը համաշխարհային վարկանիշային սանդղակում զբաղեցնում է բավականին բարձր՝ 19-րդ հորիզոնականը, 64.5 միավորով:

2018թ. էներգիայի վերափոխման ինդեքսի ցուցանիշով Հայաստանը գերազանցում է ԵԱՏՄ անդամ երկրներին[4]: Այսպես, Ռուսաստանը 114 երկրների շարքում 50.9 միավորով զբաղեցնում է 70-րդ հորիզոնականը, Ղազախստանը՝ 75-րդ հորիզոնականում է 49.7 միավորով, իսկ Ղրղզստանը եզրափակում է դիտարկվող երկրների վատագույն եռյակը (39.3 միավոր): 2019-ին նույնպես Հայաստանը էներգիայի վերափոխման ինդեքսով գերազանցում է ԵԱՏՄ անդամ երկրներին: Ըստ 2019թ. ցուցանիշի՝ Ռուսաստանը 115 երկրների շարքում զբաղեցնում է 79-րդ հորիզոնականը՝ 50.3 միավորով, Ղազախստանը 49.5 միավորով 83-րդ հորիզոնականում է, իսկ Ղրղզստանը 110-րդն է՝ 40.0 միավորով:

Հայաստանը էներգիայի վերափոխման ինդեքսի մակարդակով 2018թ. տարածաշրջանի հարևան երկրներից զիջում է Ադրբեջանին, որը զբաղեցնում է 44-րդ հորիզոնականը՝ 57.2 միավորով, Վրաստանին, որը զբաղեցնում է 45-րդ հորիզոնականը՝ 56.9 միավորով, բայց գերազանցում է Թուրքիային (54.3 միավոր) և Իրանին (41.3 միավոր), որոնք զբաղեցնում են համապատասխանաբար 58-րդ և 106-րդ հորիզոնականները: Արդեն 2019-ին էներգիայի վերափոխման ինդեքսով Հայաստանը հարևան երկրներից հետ է մնում միայն Վրաստանից, որը 32-րդ հորիզոնականում է՝ 61.1 միավորով: 2018-ի համեմատ հարևան Ադրբեջանը, բավականին զիջելով իր դիրքերը, 2019-ին զբաղեցրել է արդեն 57-րդ հորիզոնականը՝ 55.4 միավորով: 2019-ին Թուրքիան էներգիայի վերափոխման ինդեքսի ցուցանիշով 64-րդ հորիզոնականում է՝ 54.5 միավորով, իսկ Իրանը 101-րդն է՝ 43.9 միավորով:

[4] ՀՏՀ-ի քննարկվող զեկույցում ԵԱՏՄ անդամ երկրներից Բելառուսը չի դիտարկվել:

Աղյուսակ 3. ՀՀ և հարևան երկրների Էներգիայի վերափոխման ինդեքսի ցուցանիշների համեմատականը 2018-2019թթ.

Ցուցանիշ/երկիր	Հայաստան		Վրաստան		Ադրբեջան		Թուրքիա		Իրան	
տարի՝	2018	2019	2018	2019	2018	2019	2018	2019	2018	2019
Էներգիայի վերափոխման ինդեքս	55.3	57.2	56.9	61.1	57.2	55.4	54.3	54.5	41.3	43.9
Համակարգի արդյունավետության ենթաինդեքս	63.0	65.2	63.7	64.4	66.5	63.0	58.4	59.8	50.2	54.4
Վերափոխման պատրաստականության ենթաինդեքս	47.7	49.2	50.2	57.7	47.9	47.8	50.2	49.2	32.3	33.3
Էներգիայի վերափոխման ինդեքսի հիման վրա զբաղեցրած հորիզոնականը	**54**	**50**	**45**	**32**	**44**	**57**	**58**	**64**	**106**	**101**

Եթե փորձենք համեմատել ցուցանիշները՝ ըստ ենթաինդեքսների, ապա կտեսնենք, որ 2018-ին Հայաստանը հարևան երկրներից համակարգի արդյունավետության ենթաինդեքսով զիջում է Վրաստանին և Ադրբեջանին, իսկ վերափոխման պատրաստականության ենթաինդեքսով Հայաստանը գերազանցում է միայն Իրանին: 2019-ին համակարգի արդյունավետության ենթաինդեքսով Հայաստանը գերազանցում է հարևան երկրներին, իսկ վերափոխման պատրաստականության ենթաինդեքսով գերազանցում է միայն Իրանին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*